600.0035.10.08.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 օգոստոսի 2001 թվականի №35
ք. Երևան

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 10-ի №14, հունիսի 19-ի №28 և №29 որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 10-ի №14 որոշմամբ հաստատված՝ երկդրույք սակագնային համակարգում էլեկտրաէներգիայի առուվաճառքի (արտադրողի-մեծածախ գնորդ-վաճառողի միջև) պայմանագրի օրինակելի ձևի ամբողջ տեքստում «էլեկտրաէներգիայի գին» բառերը փոխարինել «էլեկտրաէներգիայի դրույք» բառերով, իսկ «էլեկտրաէներգիայի հզորության գին» բառերը՝ «էլեկտրաէներգիայի հզորության դրույք (ամսական վճար)» բառերով:

2. ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 10-ի №14 որոշմամբ հաստատված՝ երկդրույք սակագնային համակարգում էլեկտրաէներգիայի առուվաճառքի (արտադրողի-մեծածախ գնորդ-վաճառողի միջև) պայմանագրի օրինակելի ձևի 8-րդ հոդվածի 8.1 կետից հանել «ինչպես նաև ՀՀ կառավարության գործողությունները կամ անգործությունը (ներառյալ գույքի բռնագրավումը)» բառերը:

3. ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի հունիսի 19-ի №28 որոշմամբ հաստատված՝ էլեկտրաէներգիայի առուվաճառքի (մեծածախ

գնորդ(վաճառող)-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևի 6-րդ հոդվածի 6.3 կետի նախավերջին նախադասության մեջ «Վաճառողը Գնորդին» բառերը փոխարինել «Գնորդը Վաճառողին» բառերով:

4. ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի հունիսի 19-ի №29 որոշման 1-ին կետի 6.3 և 2-րդ կետի 5.3 ենթակետերի նախավերջին նախադասություններում «Վաճառողը Գնորդին» բառերը փոխարինել «Գնորդը Վաճառողին» բառերով:

ՀՀ էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մովսեսյան